

Կը մնայ խորհրդածել ուրիշ տեսակ թըշնամութեան մասին, որ կարող է վերադրուել բոլշեւիկեան Ռուսաստանին: Օրինակ, Թուրքիան ամբողջութեամբ միացնել խորհրդային Հանրապետութիւններու Միութեան, որպէս բոլշեւիկեան կարգեր ընդունող նոր հանրապետութիւն մը: Վերջին հաշուով, հայ բոլշեւիկները դադարաւոր, իսկ անոնց ժամկոչները՝ Ռոմկապետները, աւելի բարձրաձայն բոլշեւիկեան այս ընդհանուր ձգտումն է որ թշնամական արարք մը կը նկատեն հանդէպ Թուրքիոյ, եւ կը կարծեն, թէ հին Ռուսաստանի ձգտումն է որ ի կատար կ'ածուի, ու մենք ալ մեր բաժինը կը ստանանք:

Տեսնենք թէ այդպէ՞ս է:

* * *

Բոլշեւիկեան Ռուսաստանը ընդհանուր նմանութիւն մը ունի նախկին Ռուսաստանի հետ հակաանդիլական իր քաղաքականութեամբը, բայց երբ խնդիրը կուգայ Թուրքիոյ հողային բաժանման, ամբողջովին կը տարբերի հին կայսրութենէն:

Նախկին Ռուսաստանը հաշտուած էր այն հիմնական մտքին հետ, որ Թուրքիան պիտի բաժնուէր Անդլիոյ, Փրանսայի եւ իր միջեւ: Այդպիսով Ռուսաստանի բաժինը կը մնար հայկական նահանգներու մեծ մասը: Այս օրուան բոլշեւիկեան Ռուսաստանը հայկական բարձրաւանդակին պէտք չունի եւ չի կրնար այդ ամայացած հողաշերտը պատուանդան դարձնել համաշխարհային յեղափոխութեան: Այդպիսի դրաւում մը ներկայ Ռուսաստանին ոչ զինուորական, ոչ քաղաքական եւ ոչ ալ տնտեսական առաւելութիւն մը պիտի ապահովէր:

Հոս անցողակի ըսենք, որ Թե՛ս պատերազմը հիմնապէս փոխեց պատերազմական դիրքերու կարեւորութիւնը, եւ այսօր Հայաստանի բարձրաւանդակը այն զինուորական մեծ նշանակութիւնը չունի, ինչ որ կը ներկայացնէր նախորդ դարուն: Միւս կողմէ, բոլշեւիկեան Ռուսաստանը իր յեղափոխական դրօշակը կըրնայ շարժել դէպի Պարսկաստան եւ Իրաք, ինչպէս նաեւ դէպի Բալկաններ ու Միջերկրական, առանց հայկական բարձրաւանդակի անհրաժեշտութիւնը զգալու:

Սեփական շահերու թելադրանքէն մըղ-

ուած, կարելի է պնդել, որ բոլշեւիկեան Ռուսաստանը հրաժարուած է մասնակի հողային դրաւում մը ընելու մտքէն եւ կը նախընտրէ օգտագործել ներկայ Թուրքիան իր ամբողջութեամբ:

Այս օգտագործումը, որպէս բարեկամ կամ դաշնակից պետութիւն, արդէն տասը տարի է ի վեր կիրարկած են քաղաքական կեանքի մէջ, եւ բացայայտ է, որ երկու կողմերն ալ դո՛ւս են իրենց ձեռք բերած արդիւնքներէն:

Բարեկամական այս հունի ժամանակաշրջանին Թուրքիան եւ բոլշեւիկեան Ռուսաստանը սնուցած են իրարմէ տարբեր նպատակներ եւ հնարաւոր պարագաներուն այդ նպատակները մասամբ իրականացնելու ակնյայտի ջանքեր թափած են: Թուրքիա, հակուելով Ռուսաստանի կողմը, իր տուած օգուաններու փոխարէն, ոչ միայն կ'ապահովէր իր կոնակը եւ կը հարուածէր իր արեւմտեան թշնամիները, ոչ միայն կը կազմակերպուէր, որպէս ազգային պետութիւն մը, այլ նաեւ կը հետապնդէր մաս առ մաս իրականացնելու համաթրքական ծրագիրը, օգտուելով բոլշեւիկներու կատարեալ անդիտակցութենէն, կամ այդ հարցի վերաբերմամբ անոնց արհամարհական դիրքէն: Թուրքիան համոզուած էր, որ կատարուած իրողութիւնն է որ պատմական արժէք պիտի ունենայ, եւ հետեւաբար առիթէն օգտուելով, իր նպատակներու իրագործումը քայլ առ քայլ կ'ընդլայնէր:

Ռուսաստանն իր կարգին աչք կը դոցէր եւ այսօր ալ աչք կը դոցէ թրքական նման յաջողութիւններուն ի տես: Բոլշեւիկեան Ռուսաստանի ընդգրկած հորիզոնները շատ աւելի լայն են եւ պայքարը բազմակողմանի, քան թրքական հաշիւները: Թուրքերը կանխիկ առումախի արեւելեան վաճառականներ են եւ կը դո՛ւսանան կանխիկ շահերով, իսկ Ռուսաստանը գալիք օրերու հսկայ հաւանականութիւնները կը կշռէ, եւ համաշխարհային հակամարտութեան ճակատի վրայ, իր կողքին, կուրի շարքի մէջ կը դասէ Թուրքիան, ու այդ թղթէ ընկալադիրը, կանխիկ փոխարէն, իր մոտաքի տոմարներուն մէջ կ'անցնէ:

Ոոստովանինք նաեւ, որ Թուրքիոյ բռնած դիրքը չօչափելի եւ կանխիկ շահեր ալ ապա-